

ՕԾՈՒՄ ՍՈՒՐԲ ԱԲԳԱՐ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
Կիրակի, Սեպտեմբեր 20, 2009

Փա՛նոք կու տանք Աստուծոյ, որ 7րդ Դարու Սուրբ Հռիփսիմէ Տաճարի ոճով, հրապուրիչ Սուրբ Աբգար Հայց. Եկեղեցւոյ կառուցումը աւարտած ըլլալով, Ծուխին հաւատարեցեալները հոգեկան մխիթարութեամբ կը սպասէին անոր Օծման:

ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Շաբաթ, Սեպտեմբեր 19ի երեկոյեան ժամը 6:30էն սկսեալ, Եկեղեցւոյ Մելիքեան Մշակութային Սրահին մէջ տեղի ունեցաւ Ճաշկերոյթ-Պարահանդէս: Այս առթիւ յարկապէս Լոս Անճելըսէն հրաւիրուած էր Խաչիկ եւ իր նուագախումբը, որոնք հայկական եւ այլ երգերով ու նուագներով խանդավառութիւն պարճառեցին հիւրերուն:

ՀԱԿԻՐՃ ՊԱՏՄԱԿԱՆԸ ՍՈՒՐԲ ԱԲԳԱՐ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Եկեղեցւոյ Օծումէն առաջ, հարկ կը զգանք հակիրճ պարմականը ընել եկեղեցւոյ:

Արիպոնայի անդամները սկսած են կազմակերպուիլ 1957ին: 1963ին առաջին Սուրբ Պատարագը մատուցուած է օրուան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանի կողմէ: Ամիսը անգամ մը Սուրբ Պատարագ կը մատուցուէր օտար եկեղեցւոյ մէջ: Ծուխը բաւական կազմակերպուած է եւ կը բաղկանայ Ամերիկահայերէ, Միջին Արեւելքէն գաղթած հայերէ եւ փարբեր երկիրներէն գաղթած հայերէ: Յարկապէս կ'ուզենք շեշտել եւ մեր երախտագիտութիւնը յայտնել Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ամեն. Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, որ Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդը եղած արեն մեծ ուշադրութիւն դարձուց այս Ծուխին եւ ունեցաւ ապագայի տեսլականը: Ուստի, փարիներու ընթացքին Ծուխին վարճացումն ու այսօրուան իրականութիւնը իրեն կը պարտինք բոլորս:

1982ին շնորհիւ Օրիորդ Սարկիթ Յովսէփեանի նուիրած հողին եւ Տէր եւ Տիկին Կրէկ Մելիքեանի նուիրատուութեան, կարելի դարձաւ «Մելիքեան Մշակութային Կեդրոն»ի կառուցումը, որուն պաշտօնական բացումը կատարուած է 1992ի Յունուարին: Այս սրահը կը գործածուէր որպէս եկեղեցի եւ հաւաքավայր վանական ձեռնարկներու: Տարիներ առաջ բացումը կատարուեցաւ նաեւ Ծուխի գրադարանին:

Դարձեալ Օրիորդ Յովսէփեանի բարերարութեան շնորհիւ, կարելի դարձաւ համալիրէն ներս կառուցումը նոր եկեղեցւոյ: Ծուխը արդէն իսկ բաւարար գումար հանգանակած էր այս նպատակը իրագործելու համար: Վեհափառ Հայրապետի Արեւմտեան Թեմ շնորհած Հովուապետական Բ. Այցելութեան ընթացքին՝ Յունիս 16ին, 2005 կատարած էր Եկեղեցւոյ հողին օրհնութիւնը:

Կուզենք նաեւ մասնաւոր կերպով շեշտել, թէ Սուրբ Աբգար Հայց. Եկեղեցւոյ կառուցման համար մեծ նուիրում եւ աշխատանք ունեցան Ծուխին Հոգեւոր Հովիւր՝ Արժ. Տ. Զաքարիա Քհնյ. Սարիբէկեան, Ծխական Խորհուրդի Արեւնապետ՝ Բրշ. Ժիրայր Սրկ. Աւագեան, Շինութեան Յանձնախումբը, Հանգանակիչ Յանձնախումբը եւ Ծուխին հաւատարեցեալները, որոնք իրենց առարածեռն նուիրատուութիւնները կատարեցին եկեղեցւոյ կառուցումը իրագործելու համար:

ՕԾՈՒՄ ՍՈՒՐԲ ԱԲԳԱՐ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Կիրակի, Սեպտեմբեր 20ի, առաւօտեան ժամը 10:00ին Առաջնորդ Սրբապան Հայրը մատուց օրուան Սուրբ Պատարագը: Սուրբ Սեղանին սպասարկեցին Ծուխին Հոգեւոր Հովիւր՝ Արժ. Տ. Զաքարիա Քհնյ. Սարիբէկեան, Հալիվուրի Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւր եւ Հարաւային Գալիֆորնիայի Առաջնորդական Փոխանորդը՝ Արժ. Տ. Մանուկ Աւագ Քհնյ. Մարգարեան եկեղեցւոյ Սարկաւագները: Իսկ դպրաց դասի ներդաշնակ երգեցողութիւնը կատարեց Առաջնորդանիստ Սայր Տաճարի Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը՝ ղեկավարութեամբ Բրշ. Սրեփան Սրկ. Կէօպիմեանի: Սրբապան Հայրը ըստ Հայց. Եկեղեցւոյ ծէսի եւ կանոններու, կատարեց Սուրբ Աբգար նորակառոյց Եկեղեցւոյ Օծումը: Հոգեբարար այս արարողութեան ներկայ էին նաեւ նախկին Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեան, Քահանայ Հայրեր, Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը՝ ղեկավարութեամբ Բրշ. Սրեփան Սրկ. Կէոպիմեանի: Առաջնորդ Սրբապան Հայրը օրհնաբեր այս առիթով փուլաւ իր պարգամը, գնահատեց բոլորին կատարած նուիրեալ ծառայութիւնները, երախտագիտութիւնը

յայտնեց կնքահայրերուն, բարերարներուն եւ նուիրարուներուն: Գնահատութեան յարուկ խօսքեր ուղղեց Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Զաքարիա Քհնյ. Սարիբէկեանին եւ զինք պարգեւարեց Լանջախաչով: Իսկ պարշաճ նուէրներ բաժնեց Բրշ. Ժիրայր Սրկ. Աւագեանին, Տիկին Սուլի Գրիգորեանցի, Տիկին Ռիթա Պէպէքեանի եւ Սքացրէյի Քաղաքապետին:

Օրնաբեր այս առիթով, Սրբապան Հայրը իր պարգամին մէջ ըսաւ. *«Այսօր պատմական օր մըն է, երբ Աստուծոյ կամքով, հոգեւորականներու եւ Խաչատուրեան Դպրաց Դաս երգչախումբի մասնակցութեանը եւ ի ներկայութեան հաւատարեցալներու, Օծումը կը կատարեցինք Սուրբ Աբգար Հայց Առաքելական Եկեղեցւոյ: Տէրը անգամ մը եւս կոչ կ'ուղղէ բոլորիս եկեղեցի կերտելու եւ այդպիսով բաժնեկից դառնալու Աստուծոյ գործին եւ Հայց. Եկեղեցւոյ հոգեւոր առաքելութեան: Աստուծոյ պարուիրանին համաձայն, բոլորս ալ պարտինք մեր կեանքը նուիրել՝ պահպանելու համար քրիստոնէական մեր ուղղափառ հաւատքը եւ ազգային հարուստ ժառանգութիւնը: Բոլորս ալ կանչուած ենք պանպան միջոցներով ծառայելու Տիրոջ եւ մեր Սուրբ Եկեղեցւոյ եւ յարուկ առաքելութիւնը որ բոլորիս վստահուած էր կառուցել տալու Սուրբ Աբգար Հայց. Եկեղեցին: Արդարեւ, հոգեւոր իսկական առաքելութիւնը եւ ճանապարհորդութիւնը դէպի Աստուած կը սկսի այսօր: Այս եկեղեցին հպարտութիւն պիտի պարծառէ մեր համայնքին եւ Արեւմտեան Թեմին, երբ բոլորս ալ մեր ստացած Սուրբ Հոգիի շնորհները ի գործ դնենք եկեղեցւոյ բարգաւաճման եւ Աստուծոյ խօսքի տարածման համար»:*

ՃԱՇԿԵՐՈՅԹ, ՅԱՅՏԱԳԻՐ ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ

Եկեղեցւոյ Օծման եւ Սուրբ Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ ճաշկերոյթ, որու ընթացքին գործադրուեցաւ արժանավայել յայտագիր մը: Օրուան հանդիսավարն էր Տիկին Սուլի Գրիգորեանց: Ներկայ էին Արիպոնայի Միջ-Եկեղեցական Խորհուրդի Նախագահ՝ հոգեւորական Ֆլէթըն, Գոնկրէսմէն Միչըլի ներկայացուցիչը, Սքացրէյի Քաղաքապետ Սեծայարգ Լէյն եւ տեղական պանպան կապակերպութիւններուն ներկայացուցիչները: Յայտագրին մաս կապմեց նաեւ Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը:

Ճաշկերոյթի ընթացքին Առաջնորդ Սրբապան Հայրը Օրհնութեան եւ Գնահատութեան վկայագիրներ եւ Առաջնորդարանի «Հայ Ոգի» (Hye Spirit) շքանշանի պարգեւատրումներ կատարեց: Վկայագրի կամ շքանշանի արժանացան կնքահայրեր, բարերարներ, երկար տարիներու ծառայութիւն մատուցող հաւատարեցալներ, սարկաւագներ, Ծխական Խորհուրդի Արեւնապետ՝ Բրշ. Ժիրայր Սրկ. Աւագեան, հանգանակիչ յանձնախումբի Արեւնապետուհի Տիկին Սուլի Գրիգորեան, Տիկնանց Միութեան անդամներ եւ ուրիշներ:

Առաջնորդարանի կողմէ ներկայ էին Թեմական Խորհուրդի Արեւնապետ՝ Իրաւաբան Տիար ԺոպէՖ Կանիմեան եւ Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդի Արեւնապետուհի՝ Տիկին Արաքսի Պոյամեան:

Առաջնորդ Սրբապան Հայրը դարձեալ իր ոգեւորիչ պարգամը տուաւ, օրհնեց բոլորին եւ յարատեւ յաջողութիւն մաղթեց Սուրբ Աբգար Հայց. Եկեղեցւոյ հոգեւոր առաքելութեան:

Սուրբ Աբգար Հայց. Եկեղեցւոյ Օծման եւ շաբաթավերջի հանդիսութեանց մասին մանրամասն հաղորդագրութիւն պիտի առաքուի յառաջիկայ օրերու ընթացքին: